

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՅԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄԱԿԱՆԴԻՐՆԵՐ

ՈԱՖԻԿ ԳԱԼՈՅԱՆ

ԴԴԳԱՍ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիրության հնադիպութիւն հայցորդ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՅԻԱԼ-ՏՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ

ԽՍՀՄ փլուզմամբ և համակարգային փոփոխություններով պայմանավորված հիմնախնդիրներից ու շուկայական հարաբերություններում գործելու համար երկրի ինստիտուտների անպատրաստ լինելուց քացի, որոնք առկա էին նաև մյուս նորանելախ պետություններում, շուկայական քարեփոխումների առաջին տարիներին Հայաստանի կառավարության առջև ձառացած էին նաև մի շարք այլ հիմնախնդիրներ:

1988 թվականի աղետալի երկրաշարժը ամայացրեց հանրապետության ավելի քան 1130 հազար բնակչությամբ հյուսիսային շրջանները: Ամբողջությամբ կամ մասամբ ավերվեցին իրենց մեծությամբ ՀՀ-ում երկրորդ և երրորդ քաղաքները՝ Գյումրին և Վանաձորը (համապատասխանաբար 230 և 175 հազար բնակչությամբ), Սպիտակը, Ստեփանավանը և շատ ու շատ զյուղական համայնքներ: Ավելի քան 530 հազար մարդ մնաց անօթևան, քաղաքացիներից շատերը լքեցին իրենց բնակավայրերը, տասնյակ հազարավոր մարդիկ զոհվեցին: 1988թ. սրբեց նաև Ղարաբաղյան հակամարտությունը, որը իր հետ բերեց զանգվածային վերաբնակեցումներ: Տարբեր աղբյուրների վկայությամբ Աղբքեցանից Հայաստան գաղթեցին մոտ 370 հազար հայեր, հիմնականում քաղաքաբնակներ: Սրան հաջորդեց նոր տնտեսական համակարգին անցումը և 1991թ. դրամական ռեֆորմը: Տարբեր երկրների փորձը վկայում է որ նոր տնտեսական համակարգին անցումը ուղեկցվում է բազմաթիվ բացասական երևոյթներով՝ արտադրության ծավալների կրճատում, գների աճ, գործազրկության մակարդակի բարձրացում, ժամանակին ծևակորված տնտեսական կապերի խզում, խնայողությունների փոշիացում և այլն: Այս երևոյթները դրսորվեցին նաև մեր հանրապետությունում, ընդ որում ավելի սուր ձևով:

Այս ամենին գումարվեց էներգետիկ և բնական մի շարք ռեսուրսների բացակայությունը, տրամաբանությունից դուրս իրականացված սեփականաշնորհումը, տրամապորտային շրջափակումը, զանգվածային թալանը, շուկայական տնտեսության անցման փորձի բացակայությունը: Շուկայական քարեփոխումների առաջին տարիներին սոցիալական աջակցության համակարգի անհամապատասխանությունը արմատապես փոփոխվող պայմաններին, ինչպես նաև բարձր ինֆլյացիան հայ իրականության մեջ ծնեցին այնպիսի սուր հիմնախնդիրներ, ինչպիսիք են եկամուտների կտրուկ տարբերակումը և աղքատության մասսայական տարածումը: Հետևաբար ստեղծվեց մի այնպիսի իրավիճակ, երբ մարդկանց զգալի մասը սկսեց իրենց զգալ հասարակությունից վտարված: Նշենք, որ նորանելախ հանրապետությանը խորը տնտեսական անկում էր ուղեկցում նաև տնտեսության դեկին կանգնած մարդկանց զգալի մասի մասնագիտական գիտելիքների պակասը և կառավարման անկարողությունը: Նորաթուխ հանրապետության օրգանիզմը էլ ավելի հյուծեց հապճեպ իրականացված սեփականաշնորհումը, որի արդյունքում արտադրական ծեռնարկությունների մեծ մասը, տարբեր գործոնների ազդեցությամբ, փոշիացվեց՝ մեքնասարքավորումների, հոսքային զծերի մեծ մասը վաճառվեց և ավելի շատ որպես մետաղի ջարդու արտահանվեց հարևան երկրներ: Դրա հիմնական պատճառն էր առանց հաշվառման և տնտեսական գնահատման աղաղետականացման գործընթացը, առանց մշակված մեթոդիկայի: Արդյունքում, իշխանություններին մոտ կանգնած մարդիկ դարձան սեփականատերեր և միայն իրենց քաժին հասած գույքի մի մասի վաճառքից վաստակեցին մի քանի անգամ ավելի գումար, քան վճարել էին սեփականաշնորհման համար: Առանձին սեփականատերեր դարձան մեծահարուստներ, սակայն սեփականաշնորհված ծեռնարկությունների մեծ մասը, բնականաբար դադարեց գործելուց, հետևաբար նվազեց ՀՆԱ ծավալը, և աճեց գործազրկության մակարդակը: Հողի սեփականաշնորհումից հետո նույն ճակատագրին արժանացավ նաև զյուղատնտեսությունը, որը շուրջ երկու տասնամյակ

է, ինչ աշխատում է ցածր արդյունավետությամբ, քանզի ժամանակին չտեղծվեցին գյուղատնտեսությունը վարելու համար անհրաժեշտ ենքակառուցվածքներ, չձևավորվեց ճկուն և հիմնավորված հարկային քաղաքականություն, գյուղատնտեսական մթերքների վաճառքի մեծածախ շուկաների ձևավորման գործում արիեստական խոշընդուներ ստեղծվեցին, փոշիացվեց գյուղատնտեսական տեխնիկան, չտեղծվեց վերամշակող ձեռնարկությունների լայն ցանց:

Որոշ բացասական երևոյթներից հանրապետությունը կարող էր խուսափել, եթե անցումը նոր տնտեսական համակարգին տեղի ունենար ոչ թե եեղափոխական, այլ եվլոյուցիոն ճանապարհով: Այստեղ հարկ է նշել շուկայական տնտեսության անցման նախկին մերձքաղյան հանրապետությունների փորձը, որոնք սեփականության տարրեր ձևերի կազմավորումն իրականացրեցին քնական հունով՝ աստիճանաբար, որը հնարավորություն տվեց խուսափել անցման շրջանի բացասական մի շարք երևոյթներից: Ցավոք նույնը տեղի չունեցավ մեր հանրապետությունում, քանի որ չեր մշակվել շուկայական տնտեսությանն անցման ծրագիր, նորանկախ հանրապետությունում 1-2 տարին մեկ ձևավորվում էր նոր կառավարություն և նրանցից ոչ մեկը, ըստ եռթյան, ձեռնամուխ չեղավ այդ խնդիրների լուծմանը, ինչպես նաև նախորդների կողմից թույլ տրված սխալների ուղղմանը, և այս միտումը շարունակվում է մինչ օրս: Առանձնահատուկ պետք է նշել հանրապետությունում առկա մի քանի կլանների դեմք պայքարի մասին, որոնք արտոնյալ դիրք ունեն առանձին ապրանքների շուկայում և խոշընդունում:

Վերը ապածներից կարելի է հետևություն անել, որ նորաթուխ հանրապետությունը հայտնվեց տնտեսական և սոցիալական անհատակ անդունդում: Այս ամենը իր հետ բերեց խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամը, որը գնալով շարունակվում ու զարգանում է մինչև օրս: Հետևաբար մեր հանրապետության քնակչության մեծ մասի աղքատությունը միանգամայն օրինաչափ է և պատճառարանված: Նշված անցանկալի իրադարձությունները ծնած սոցիալ-տնտեսական խորը անկումը Հայաստանի Հանրապետությունում ծնեց նաև մի շարք ծանր և անդառնալի հետևանքներ՝ քնակչության զանգվածային աղքատացում, արտագաղթ, գործազրկություն, եկամուտների անհավասարության խորացում, ինչպես նաև հասարակության տագնապալի չափերի բեկուացում, և այս ամենը գնալով խորանում և շարունակվում է մինչև օրս: Աղքատության և անհավասարության առկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում հանգեցնում է քնակչության կյանքի որակի անցանկալի երևոյթների.

- հասարակության բեկուացման առկա վիճակի շարունակությունը սպառնում է խորացնել հասարակության շերտերի փոխադարձ օտարումը,
- աղքատության մեծ չափերը խոշընդունում էին քաղաքացիական հասարակության և քաղաքացիական համաձայնության կայացմանը,
- աղքատների բազմահազարանոց խավն ավելի ու ավելի ետ է մնում մարդկային զարգացման ընդհանուր օրինաչափությունից,
- աղքատության տարածվածության ու խորացման պայմաններում խիստ սահմանափակվում է քաղաքացիների ինքնապահպաննան, ինքնակազմակերպման, ինքնահաստատման, ինքնաարտահայտման և ինքնաիրացման հնարավորությունները, որն էլ նրանց մղում է արտագաղթի,
- աղքատության գործնթացը հասարակության անդամների մեծամասնության մեջ արմատավորում է պասսիվություն, հոգեքանական դեպրեսիա, նիմիլիզմ և հոռեւնսական տրամադրություններ, ինչի հետևանքով պակասում է նախաճեռնողականությունն ու մասնակցությունը երկրի հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքին:

Հասարակության ձեռք բերած բարեկեցության մակարդակը, տնտեսական և տեխնոլոգիական աճը, վերջին ժամանակների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում նյութական բարիքների քանակական աճի դերի նվազումը և հասարակության նորաթուխ կարիքները հանդիսացան «կյանքի որակ» հասկացության ծագման գլխավոր նախադրյալներ: «Կյանքի որակ» հասկացությունը առաջին անգամ օգտագործել է տնտեսագետ Զ.Կ.Գալրայքը: Գիտական գրականության մեջ առկա են «կյանքի որակ» հասկացության մի շարք տարրեր բնորոշումներ, որոնք կարելի է ներկայացնել դրանց հետևյալ տիպերի տեսքով.

- Կյանքի որակը արտացոլում է սոցիալ-քաղաքական նպատակները և ֆուտուրոլոգիայի տերմինարանական ապարատի տարրը:
- Կյանքի որակը բնութագրվում է որպես բարեկեցության նորմատիվային չափանիշ, սոցիալական նվաճնան, սոցիալական, տնտեսական և տեխնոլոգիական քաղաքականության արդյունավետության վերլուծության չափանիշ:
- Կյանքի որակը ներկայացվում է որպես բարեկեցության հասած հասարակության բնութագիր:
- Կյանքի որակը ընդիանությունում է կյանքի պայմաններով և բարեկեցության նվաճումների ցուցանիշների համակարգը:
- Բնորոշումներ, որոնք ընդգծում են կյանքի որակի սուբյեկտիվ հոգեբանական էությունը:
«Կյանքի մակարդակ» հասկացությունն արտահայտում է մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանը, սպառողական բարիքներով ապահովվածության աստիճանը, որոնք բնութագրվում են առավելապես քանակական ցուցանիշներով (աշխատավարձի չափը, իրական եկամուտը, սպառվող բարիքների և ծառայությունների ծավալը, պարենային և ոչ պարենային ապրանքների սպառման մակարդակը, աշխատանքային և ազատ ժամանակի տևողությունը բնակարանային պայմանները, կրթության, առողջապահության մշակույթի մակարդակը և այլն): Այսինքն այս կատեգորիան մատնանշում է մարդկային պահանջմունքների բավարարման այնպիսի գնահատում, որը կարող է չափվել միայն քանակապես՝ դրամական և իրական միավորներով: Կյանքի պայմանների քանակական գնահատման ոչ բավարար լինելը, որն ընդգրկվում է «կյանքի մակարդակ» հասկացության մեջ, առաջացրեց «կյանքի որակ» հասկացությունը: Կյանքի որակը՝ կյանքի պայմանների (նյութական, սոցիալական, տնտեսական, ժողովրդավարական և այլն) ամբողջությունն է, դրանց զարգացման մակարդակը, կյանքի սուբյեկտիվ ընկալումը և գնահատումը: Այն արտահայտում է մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման որակը (սննի որակը, հագուստի որակը, բնակարանի հարմարավետությունը, առողջապահության, կրթության, սպասարկման ոլորտի որակը, շրջակա միջավայրի որակը, ազատ ժամանակի կառուցվածքը, գիտելիքներով բավարարման աստիճանը, սքրենչային իրավիճակների հաղթահարման աստիճանը և այլն): Ուժանք այն նույնացնում են բարեկեցության, կյանքի մակարդակի, կյանքի ոճի և ապրելակերպի հետ: Մյուսները՝ ընդհակառակը, հակառակում են: Կյանքի որակի գնահատմանն են վերաբերվում ինչպես անհատի ինքնապահպանման, ինքնակազմակերպման, ինքնազարգացման, այնպես էլ ինքնահաստատման ինքնարտահայտման, ինքնաիրացման պահանջմունքների որակական մակարդակի գնահատում: Որքան ավելի կարևոր է պահանջմունքը, այնքան ավելի շուտ այն պետք է բավարարվի, այսինքն՝ առաջին հերթին պետք է բավարարվեն ստորին, հանապազոյա պահանջմունքները: Համաձայն Ա.Մալոուի տեսության՝ «քարձրագույն» պահանջմունքների զարգացման պայման է «ցածրագույն» պահանջմունքների բավարարությունը: Այդ պատճառով էլ առաջադիմական անցումը մի պահանջից մյուսին արտահայտում է մարդկության աստիճանական զարգացման գործընթացը: Իր տեսությունում Արքահամ Մալոուն հիմնաքար է համարում պահանջմունքների համակարգի հիմքարիչի բնույթը բուրգի տեսքով (ստորոտում՝ «ցածրագույն» պահանջմունքները և գագարում՝ «քարձրագույն» պահանջմունքները), և, որ մարդու հենքային պահանջմունքների բավարարությունը հիմք է նոր ֆունկցիոնալ պահանջմունքների զարգացման ու իրացման համար: Այս պատճառով պահանջմունքների տարբերակումը համապատասխանում է տնտեսական և սոցիալական գործընթացին: Հարկ է նշել, որ ստորին կամ հենքային պահանջմունքների չբավարարությունը կարող է ունենալ հետադիմական արդյունքներ:

Նմանատիպ հետևողություններ արել են բազմաթիվ գիտնականներ, այդ թվում սոցիոլոգ Պ.Ա. Սոլոկինը: Ըստ նրա տեսության, պահանջմունքների «ստորին» մակարդակի չբավարարվածությունը բերում է «հենքային բնագրների» ճնշման, որը եթե տարածվի բնակչության մեծ մասի վրա, ապա կարող է քայլայիշ դառնալ հասարակության զարգացման համար (նման միտում այժմ նկատվում է ներ հանրապետությունում): Եվ ընդհակառակը՝ հենքային պահանջմունքների բավարարությունը միաժամանակ նոր պահանջմունքների ապահովման ռեսուրսային հիմք է, որը հնարավորությունն է տալիս որոշակիություն շունեցող ցանկությունները վերածել իրական արժեքների և հասանելի նախասիրությունների:

Այսպիսով կարելի է ասել, որ կյանքի որակը մարդկանց ինքնապահպանման, ինքնազարգացման, ինքնակազմակերպման, ինքնահաստատման, ինքնաարտահայտման և ինքնաիրացման պահանջների բավարարման որակական մակարդակն է, գործունեության բովանդակությունը, որակական որոշակիությունը: Այն հասարակության բարեկեցության բնութագիր չափանիշ է, մարդու կյանքի պայմանների և այդ պայմաններով սուբյեկտիվ բավարարվածության խումը ցուցանիշների համակարգ: Մեր կարծիքով, կյանքի որակը կախված է բնակչության բարեկեցությունից, կենսամակարդակից և ապրելակերպից: Իսկ կյանքի որակի բարձր չափանիշներ ապահովելու համար, ինչպես վերը նշվեց, անհրաժեշտ է, որպեսզի հանրապետությունում հաղթահարվեն աղքատությունը և հաստատվեն ժողովրդավարական սկզբունքներ: Սակայն աղքատության հաղթահարման հիմնախնդիրներին հանրապետությունում կարելի է ասել ոչադրություն հատկացվեց 21-րդ դարի նախաշեմին, եթե 2000 թվականին մշակվեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» (ԱՀՌԾ), որը հետագայում որոշակի փոփոխությունների ենթարկվեց, ապա հաստատվեց ԱՀՌԾ համակարգող խորհրդի կողմից և ներկայացվեց Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը: Այսպիսով 2003 թվականի օգոստոսի 8-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունեց և հաստատեց ԱՀՌԾ-ը: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշված ծրագրի նախագիծը դրվեց համաժողովրդական քննարկման, որին մասնակցեցին պետական, հասարակական կազմակերպություններ և տարբեր մասնագիտությունների բազմաթիվ հեղինակներ: Ավելին, մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ (ՄԻԺԻ) անկախ հասարակական կազմակերպությունը մրցանակաբաշխություն կազմակերպեց կառավարման ծրագրի նախագծի քննարկման համար, որին մասնակցեցին երեսունից ավելի հեղինակներ՝ աղքատության հաղթահարմանը վերաբերող իրենց կոնկրետ առաջարկություններով և սցենարներով: Այս ամենից հետո թվում էր, թե կառավարության կողմից ընդունված ԱՀՌԾ-ն իրենից ներկայացնում է հանրապետության առջև դրված խնդիրների լուծման համայիր միջոցառումների ամբողջություն, միջոցառումներ, որոնք 2015 թվականին անմնացորդ կլուծեն աղքատության հիմնախնդիրները, հետևաբար հանրապետությունում կապահովեն բարձր կենսամակարդակ, բարեկեցություն և իհարկե կյանքի որակի բարձր բաղադրիչներ և չափանիշներ: ԱՀՌԾ-ի իրական լինելը իրագործման հնարավորությունը գնահատելու համար դիտարկենք մի քանի ցուցանիշների կանխատեսումը 2003-2015 թք.:

	2003	2005	2009	2015
Իրական ՀՆԱ-ի աճի %-ը	13.8	6.0	5.5	5.0
ՀՆԱ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	834	980	1338	1999
Աղքատների թվաքանակը (տոկոսներով՝ բնակչության նկատմամբ)	46.2	41.0	30.8	19.7
Շատ աղքատների թվաքանակը տոկոսներով	15.2	14.2	11.4	4.1
Եկամուտների համակենտրոնացման Զինի գործակիցը	0.510	0.491	0.469	0.446
Սիրիա ամսական աշխատավարձը՝ (դրամ)	29462	35048	48927	71607
Սիրիա ամսական կենսաբոշակը (դրամ)	6365	8939	15755	26714
Բնակչության 1 շնչի միջին ամսական դրամական եկամուտները	12410	16081	25705	41168

Տնտեսական աճի տեմպերը կանխատեսվում են խիստ համեստաբար, որի ազդեցությամբ աղքատության էական կրծատում չի նախատեսվում, այսպես, 2015 թվականին բնակչության 19.7%-ը դեռևս կիամարվի աղքատ, այսինքն՝ ինձ բնակչից մեկը մնալու է աղքատ: Ակնհայտ է, որ ծրագիրը նախատեսում է փոփոխություններ չկատարել բաշխման հարաբերությունների համակարգում և աղքատության հաղթահարումը կապել տնտեսական աճի հետ: Սակայն, մեր հաշվարկներով, տարեկան միջին աճի 5%-ի դեպքում աղքատությունը Հայաստանում հնարավոր կլինի հաղթահարել 26-27 տարում՝ 2028-2030 թվականներին, տնտեսական աճի տարեկան միջին 6% աճի դեպքում 23 տարում, իսկ 7% տարեկան միջին աճի դեպքում՝ 17 տարում, այսինքն 2020 թվականին: Երազիրը նույնիսկ չի նախատեսում շատ աղքատ բնակչության լրիվ վերացում: Եկամուտների կենտրոնացման Զինի գործակիցը եական փոփոխություններ չկրելով 12 տարվա ընթացքում 0.510-ից դառնալով 0.446 աղքատության ոչ մի հիմնախնդիր չի կարող լուծել: Բաշխման հարաբերությունների նախկին

համակարգի պահպանման մասին է նաև այն փաստը վկայում, որ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ նկատմամբ 2003 թվականի 19%-ից 2015 թվականին դառնալու են 19.9%: Միակ ափոփիչ հանգանակը այն է, որ հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 15%-ից 2015 թվականին դառնալու է 18.7%: Հավատ չի ներշնչում աղյուսակի վեջին երեք ցուցանիշների իրագործումը, եթե բաշխման հարաբերություններում էական փոփոխություններ չկատարվեն: Եթե բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող ազգային եկամուտը 834 ԱՄՆ դոլարից դառնալու է 1999 դոլար, այսինքն աճելու է ընդամենը 2.3 անգամ, ինչի հաշվին է միջին կենսաքուակը աճելու 4.2, մեկ բնակչին բաժին ընկնող եկամուտները՝ 3.2, միջին ամսական աշխատավարձը 2.5 անգամ:

Սակայն մեր կառավարությանը կարծես օգնության հասավ 2008 թվականի համաշխարհային ֆինանսական տնտեսական ճգնաժամը (ՀՖՏԾ): Նախ նշենք այն փաստը, որ վարչապետը տարեր լրատվամիջոցներով փորձում էր հասարակության հավաստիացնել, որ համաշխարհային ֆինանսական տնտեսական ճգնաժամը Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա չի ազդելու: Սակայն արդեն տարեվերջին Հայաստանի Հանրապետության կառավարությունը խոստովանեց, որ ՀՖՏԾ իր ազդեցության ոլորտն է ընդգրկել նաև ՀՀ տնտեսությունը, ուստի պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Մեր կարծիքով 2008-2009 թվականներին արտասահմանից եկող դրամական տրանսֆերների կրծատումը, հանրապետությունում հազարավոր աշխատատեղերի կրծատումը, արտագնա աշխատանքի մեկնողների աշխատատեղերի կորուսը ել ավելի խորացրեց հանրապետությունում առանց այդ ել խորացող տնտեսական ճգնաժամը:

Չխորանալով արդեն ձևավորված վիճակի վրա իրենց բացասական ազդեցությունը քողած վերոնշյալ մի շարք պատճառների մեջ, նշենք մի քանի ուղիներ, որոնք կարող են բարելավել հանրապետության բնակչության կյանքի որակը: Դրանցից հիմնականը, մեր կարծիքով, նոր աշխատատեղերի ստեղծումն է, որի համար անհրաժեշտ է ներդրավել ներդրումների համար անհրաժեշտ պայմաններ և բարենպաստ միջավայր: Այսինքն ներդրումները հիմնականում պետք է ուղղվեն փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծմանը ու զարգացմանը: Առանձնահատուկ պետք է նշել հանրապետությունում մի քանի կլանների դեմ պայքարի մասին, որոնք արտոնյալ դիրք ունեն առանձին ապրանքների շուկայում և խոշննութում են ներդրումները այդ ոլորտներում: Գյուղատնտեսության զարգացման նպատակով անհրաժեշտ է.

- արտոնյալ վարկերի տրամադրում,
- հարկագանձման մեխանիզմի կատարելագործում,
- գյուղատնտեսական տեխնիկայի, սերմացուի, պարարտանյութերի տրամադրում,
- բերքի տեղափոխման և մթերման մկուն համակարգի մշակում,
- գյուղատնտեսական մթերքների մշակման ձեռնարկությունների լայն ցանցի ստեղծում և արտոնությունների տրամադրում,
- պետական գնումների կազմակերպման խնդիրների լուծում,
- ներքին շուկայի պաշտպանվածության ապահովում և այլն:

Բնակչության աղքատության հաղթահարման լուրջ միջոց է պայքարը ստվերային տնտեսության դեմ՝ այն նվազագույնի հասցնելու նպատակով, ինչը առանձին մասնագետների գնահատմամբ հնարավորություն կտա 2.5-3 անգամ ավելացնել պետական բյուջեի եկամուտները՝ հատկապես ուղղակի հարկերի գանձումների ավելացման հաշվին: Գաղտնիք չէ, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտները հիմնականում ձևավորվում են անուղղակի հարկերից, ուստի պետք է նվազեցնել անուղղակի հարկերի բաժինը ի հաշիվ ուղղակի հարկերի, քանի որ անուղղակի հարկերը մուծում են լայն մասսաները: Տնտեսական աճի բավականին բարձր տեսմանը վերջին տարիներին, պետք է, որ իրենց դրական ազդեցությունը քողներին բնակչության սոցիալական վիճակի վրա, սակայն իրականում այդպիսի փոփոխություններ չեն եղել: Ուստի կատարելագործման կարիք ունի նաև բաշխման մեխանիզմները, մասնավորապես, խոսքը վերաբերվում է բնակչության եկամուտների կարգափրմանը՝ կապված աշխատավարձի կարգափրման և բնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովման հետ: Բնակչության նվազագույն պահանջմունքների բավարարումը պետք է հանդիսանա այն

հիմքը, որի վրա խարսխվելու է բնակչության եկամուտների կարգավորման նպատակով իրականացվող քաղաքականություն:

Չափ ավելի է կարևորվում հարկային և մաքսային ճկում քաղաքականության մշակումը, վարկերի տրամադրման համակարգի ձևափորումը: Բացի տնտեսական պատճառներից, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա իրենց բացասական ազդեցությունն են բողնում նաև մարդկային ունակությունների և կարողությունների ձևավորման, զարգացման և իրացման անհավասար պայմանները:

ՈՍՖԻԿ ԳԱԼՈՅԱՆ

ՌԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիրության ինստիտուտի հայցորդ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՐՎԿԻ ԲԱՂԱՊՐԻՉՆԵՐՈ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Կյանքի մակարդակը ցույց է տալիս նյութական պահանջմունքների բավարարման աստիճանը և արտահայտվում է քանակապես, իսկ կյանքի որակը բնութագրվում է սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարմամբ և արտահայտվում է որակապես: Կյանքի մակարդակը և որակը փոխկապակցված են, բայց ոչ նույնականացված: Ավելին, «կյանքի որակ» մարդու (անհատի և հասարակության) կյանքի կենսագործության տնտեսական, սոցիալական, հոգեբանական, մշակութային, կրթական, առողջապահական ասպեկտները բնորոշող կիզակետային չափանիշ է (հայեցակարգ) և արտահայտում է մարդու (հասարակության) պահանջմունքների հագեցման որակական մակարդակը:

Գիտական գրականության մեջ «կյանքի որակ» հասկացությունն ունի մի շարք տարրեր՝ բնորոշումներ, չկա կոնկրետ հայեցակարգ և սահմանում: Կարելի է ասել, որ բոլորը և՝ նույնականացվում են միմյանց: Սակայն կարելի է առանձնացնել «կյանքի որակի» բնորոշումների առավել կարևոր հետևյալ տիպերը.

1. Բնորոշումներ, որոնք կյանքի որակը բնութագրում են որպես բարեկեցության կիզակետային չափանիշ, որոշակի սոցիալական նվաճման, տնտեսական և տեխնոլոգիական հնարավորությունների արդյունավետության չափանիշ, գնահատման համակարգ:
2. Բնորոշումներ, որոնցում կյանքի որակը արտացոլվում է հասարակության սոցիալ-քաղաքական հնարավորությունների օգտագործման արդյունավետության որակական չափանիշ:
3. Բնորոշումներ, որոնցում կյանքի որակը հանդես է գալիս որպես կյանքի պայմանների և բարեկեցության ձեռքբերման սիմբետիկ ցուցանիշ:
4. Բնորոշումներ, որոնք ընդգծում են կյանքի որակի սուբյեկտիվ հոգեբանական էռյունը:

Հետևաբար, այն հասարակության բարեկեցության ամփոփիչ ցուցանիշ է և արտահայտում է մարդկանց պահանջմունքների բավարարման որակական մակարդակը: Այսպես, կարելի է արձանագրել, որ «կյանքի որակ» մարդկանց ինքնապահապահման, ինքնակազմակերպման, ինքնաներդրման, ինքնահաստատման, ինքնարտահայտման և ինքնահացման պահանջմունքների բավարարման որակական մակարդակն է, գործունեության բովանդակությունը, որակական մակարդակի գնահատականը:

Այսուղի կարևոր նշանակություն են ստանում կյանքի որակի բաղադրիչների ընտրությունը և ցուցանիշների համակարգի կազմը ու կառուցվածքը: Կյանքի որակը պայմանավորող բաղադրիչների ու նրանց ցուցանիշների բազմակիացման (մանրամասնեցման) աստիճանը հնարավորություն է տալիս կատարել կյանքի որակի բազմակողմանի և սպառիչ վերլուծություն:

Կան հեղինակներ, որոնք կյանքի որակը արտահայտում են սակավ բաղադրիչներով, օրինակ՝ Զ. Ֆորեստերը նշում է 4 բաղադրիչներ՝ սորեսային իրադրությունների և կյանքի դժվարությունների մակարդակ, շրջակա միջավայրի վիճակ, բնակչության կուտակման աստիճան և սննդի ու առողջության որակ: